Արձանագրություն N 2
«ԹՑՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան «03» «հոկտեմբերի»2025.թ

ժ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Ավետյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մկրտչյանը և Ա. Մովսիսյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Ավագյանը

1. «ԹՑՊՈԼ-ԳՀԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնանշման գնման ընթացակարգի շրջանակներում 02.10.2025թ. ներկայացված հարցմանը պարզաբանում տրամադրելու վերաբերյալ
(Մ. Ավետյանը)

1.1 Պարզաբանման պահանջի տեքստ:

Երևանի «Բաղրամյան ԱԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ԹՑՊՈԼ-ԳՀԱՊՁԲ 25/14 ծածկագրով մրցույթի 5-րդ լոտի անխափան սնուցման սարքի տեխ. բնութագրում նշված է «Տվյալների ցուցադրում բազմաֆունկցիոնալ LCD/LED գունավոր հպումային (touch) դիսփլեյի վրա»:

Խնդրում ենք պարզաբանել՝ Կարո՞ղ է արդյոք կապույտ դիսփլեյը համարվել «գունավոր»՝ հաշվի առնելով, որ այն ապահովում է անհրաժեշտ ֆունկցիոնալությունը:

Հնարավո՞ր է արդյոք առաջարկել ոչ հպումային (անհպում) կապույտ դիսփլեյ, եթե սարքի բոլոր մնացած տեխնիկական բնութագրերը լիովին համապատասխանում են տենդերի պահանջներին:

1.2. Պարզաբանում տրամադրելու տեքստ:

Ի պատասխան հարցմանը՝ տեղեկացնում ենք, որ ԹՑՊՈԼ-ԳՀԱՊՁԲ 25/14 ծածկագրով մրցույթի 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված տեխնիկական պայմանները պարտադիր են: Այդ պայմաններից բացի՝ մասնակիցների կողմից ներկայացված այլ տեխնիկական չափանիշները, որոնք կնպաստեն սարքի որակական չափանիշների ավելացմանը, գնահատող հանձնաժողովի կողմից կգնահատվեն բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Ավետյան

Անդամներ՝ ---------- Գ.Մկրտչյան

---------- Ա. Մովսիսյան

Քարտուղար՝ ---------- Գ. Ավագյան